ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2023 թվականի N 406-Ա

«ՇԵՆԱԹԱՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ ԼԱՐԻՍԱ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով «Շենաթաղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարինե Պետրոսյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ՝

«Շենաթաղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարինե Պետրոսյանի առողջական խնդիրների պատճառով՝ 2023 թվականի հոկտեմբերի 16-ից՝ նրա անաշխատունակության մեջ գտնվելու ընթացքում, տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ՊՈԱԿ-ի ուսուցչուհի Լարիսա Ստեփանյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 16
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290